

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԲԵՂԱՅ ՄՈՒՇԵԱՆ

891.99


Մ

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՑԱՂԹԱՆԱԿԸ

ՏՊ. «ՆՈՐ ԱՍՏԳ.»

Գ.Ա.Հ. Կ. Բ. Ե.

1 9 4 7



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԻՍԿՈՒՀԻ — Տանտիրուհի

ԱՂԱԻՆԻ — Դուստրը

ԵՒՆԻԿԻ — Ընկերուհի

ԵՄԹԵՐ — Դրացի

ԱՆՈՒՇ — Ծառան

ԳԵՂԱՄՄ — Վաճառական

Ոստիկան մը եւ հրեշտակ մը:

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՑԱՂԹԱՆԱԿԸ

Ա. ՏԵՍԱՐԱՆ

ԱՆՈՒԾ. (Աւել մը ձեռքին, դենջակով, պատռուած հագուստ եւ հիմ հողաբափ: Միջակորեարի մը բնակարանին մէջ կոկիկ կահաւորումով: Սեղան մը՝ վրան գիրքեր, արուներ շարուած չորս կողմբ: Անուս աւլելով եւ ընդհատ կենալով)

— Ինծի պէսներն արգեօք ո՞րքան իրաւունք ունին ապրելու այս աշխարհքիս երեսը: Ի՞նչ դառն բախտ է եղեր իմա, ո՞վ Աստուած: Միթէ ինծի հոգի ես տուեր լոկ առաստանք կրելու համար: Եթէ այդպէս է կամքրդ թող օրհնեալ ըլլայ: Աստազ տարիքի մէջ կորսնցնել ծնողք ու այն ալ ցաւալի պարագաներու մէջ, մին ինքնաշտրժի և միւսը կրակի զոհ աալով ու այս տարիքիս մէջ գատապարտաւիլ սպասուհիու-

թիւն ընելով տպրուստ հոգուլու, մինչ անդին ինծի տարեկիցներ գպրոցներ յաճախեն ու մարդ ըլլան։ Այսքանով ալ պիտի գոհանայի եթէ խղճամիա տիրուհի մը ունենայի։ Օրը եթէ քսանըշորս ժամ աշխատելու ըլլամ։ Հի գառնար ու ըսեր որ քիչ մը հանգիստ ըրէ, զնա քնացիր, մեղք ես։ Հակառակ այդ բոլորին կրկին իր կշառմբանքներուն և անէծքներուն տակ կը տանջուիմ։ Բայց ի՞նչ կրնամ ընել։ Ի՞նչ կուգայ ձեռքէս։ Ստիպուած եմ համբերել ու տոկալ, քանի որ ան է եղած ազատարար ու անոր կը պարտիմ սա տարիքս։

ԻՍԿՈՒՀԻՀԻ. — (Զլայնացած ներս կը մտնէ). Այս ի՞նչ տակնուվրայութիւն, թափթփոծ աղջիկ։ Ուտել-խմելէն զատ բան չի գար արգէն ձեռքէզ։ Այսքան տարի է տոպնջականութիւնս կը վայելես և տակաւին չկըրցար օր մը զոհ ձգել զիս։ Այս տարիիդ մէջ պէտք է որ գուն ժամանութիւնը կայ մէջու, չիս կրնար գուն մարդ ըլլալ։ Հինգ վայեկեանէն պէտք է զերջացած տեսնեմ ամէն բան։ Շարժէ քիչ մը, որովհետեւ այսօր հիւր պիտի ունենամ։

ԱՆՌԻՇ. — (Երկիւղածութեամբ) Շատ լու տիկին. գլխուս վրայ։

ԻՍԿՈՒՀԻՀԻ. — Գլուխդ կրողը տանի։ Բերնիդ ծամոնն է եղած գլուխդ ու ամէն նեղը մնալուդ մէջտեղ կը նետես զայն, ի՞նչ կ'ըլլար՝ հրեշտակը շուարելով մօրդ տեղ քու գլուխդ տաներ։ Ինչ որ է, շուտ ըրէ որ հիւրերուն առջեւ չխայտառակուիմ (դուրս)։

ԱՆՌԻՇ. — (հեկեկալով) Ախ մայրիկ, անուշիկ մայ-

րիկ, չե՞ս լսեր սա դառն խօսքերը, որոնք ողջ ողջ
կը խաչեն զիս և չե՞ս տեսներ անտանելի սա վի-
ճակս: Մայր, գթա իմ վրաս և տար զիս ալ հոն՝
քովդ: Ախ, ինչ գժբախտ եմ եղեր ես: Մինչև ե՞րբ
պիտի ձգես որ անգօանեն ու այպանեն զիս մարդիկ,
անխիղն մարդիկ:

ԱՂԱԽՆԻ. — (Ծերս ու մօտենալով Անուշին) Անո՛ւշ,
նորէն տխուր կ'երեւիս, ի՞նչ ունիս, անհանգի՞ստ ես
արգեօք, թէ ոչ նորէն միտքդ ինկաւ մայրդ: Խօսէ՛,
մի՛ լար, ա՛լ հերիք է: Զե՞ս գիտեր որ արցունքը
վնաս կու տայ աչքերուդ:

ԱՆՈՒՇ. — Ոչինչ...

ԱՂԱԽՆԻ. — Մի՛ պահեր սիրելիս: Գիտես որ
այս տունին մէջ քեզի էն մօտիկը ես եմ ու ձեռքէս
եկածին չափ հասած եմ նեղ օրերուդ՝ փրկելու քեզ
ծանր գիճակներէդ: Ինչո՞ւ չես ուզեր բանալ ցաւերդ
ինձի: Արգեօք անգիտակցարար վշտացուցած եմ քե-
զի: Բսէ՛ եթէ այդպէս է:

ԱՆՈՒՇ. — Ախ, ի՞նչ ըսեմ, իմ սև բախտս է.
պէտք է սիրով ու համբերութեամբ տանիմ զայն:

ԱՂԱԽՆԻ. — Նորէ՞ն մայրս:

ԱՆՈՒՇ. — Այո՛ մայրդ, նախատեց զիս ու հին
վէրքերս բորբոքեց:

ԱՂԱԽՆԻ — Հոգ չէ սիրելիս, համբերութիւն
ունեցիր ու քաջ եղիր: Եթէ գիտնաս որ մայրս իմ
հետա ալ այդպէս կը վարուի, բնաւ չես տխրիր: Ե-
ւիր, սրբէ աչքերդ ու եկուր միասին աշխատինք:
Օդսեմ քեզի որ շուտով լրացնենք գործերնիս: Ամէն
ցաւի եթէ մարդ հոգ ընելու ըլլայ, գիտցած եղիր
որ այս կեանքը գժոխքի կը նմանի: Քաջ եղիր և

մի՛ սրդողիր ինքզինքդւ Եթէ անուշութեամբ պատասխանես մօրս հրամաններուն և սիրով կապտարես իր հրահանգները, պիտի տեսնես որ քու հոմքերութեամբ արդէն յազմած ես (ԱՏՔԻ նայենք կը լսուին) Հեռանամ, կ'երեւի ինքն է եկողը. Բասմաներս կէտառ կէտ կատարել չի մոռնաս. (դուրս):

ԱՆՈՒԾ. — Ի՞նչ բարի հոգի ունի: Ի՞նչ կ'ըլլար այս ազնուութենէն կտոր մը մօրը քով ալ գտնուէր: Իրարմէ այնքան հեռու են բնաւորութեամբ որ մարդ կը տարակուսի զայն իր որդին կարձելու:

ԻՍԿՈՒՀԻ. — (Եկեւ մՏԵԼՐԱ) Տակաւին չես վեր ջացուցած: Սո աթոռները հօն տար դիրու: Հազար տնգամ բատծ եմ ցյու սեղանիս առջե մէկ աթոռ միայն պիտի զնես: Փեսուր տէկլը բեր և սա զիրքերուս փոշին մաքրէ: Ծայլ գանդազաշարժ: Իմ սեղան փթէ ուրիշ մէկը բլուր՝ շատանց արժանքամծ էր քեզ:

ԱՆՈՒԾ. — Բայց Տիկին...

ԻՍԿՈՒՀԻ. — Լոէ՛, տակաւին լիզո՞ւ ունիս խօս սիլու: Հերացիր աչքիս առ ջեւլն: (Անուշ՝ դուրս կը խալի: Խակուհի սեղանին վրայ բան մը փետուելով կը զբաղի ու զայրացած): Հոս եկուր, հոս: Ո՞ւրիշ սեղանիս վրայ ինքնահոս գըիչ մը ունէի, ո՞ւրիշ դրած ես:

ԱՆՈՒԾ. — Ի՞նչ գրիչ, տիկին:

ԻՍԿՈՒՀԻ. — Շուտ ուր որ տարիր հօն բեր: Բայց է գողութեամս ալ սկսար:

ԱՆՈՒԾ. — Տիկին, ես...

ԻՍԿՈՒՀԻ. — Կորիր աչքիս առջեւէն և մի աչքատիր պարապ տեղ ինքզինքդւ արդշարացնել: Այս վայրկեանիս ուր որ է պէտք է բերես: Տօւնիս մէջ

ուտես խմես, ու ի վարձատրրւթիւն այդ բոլորին
ելլես ապրանքներս գողնասաւ: Այս ի՞նչ փորձանք ես
եղեր: Ես որքան լիմար մը եղած եմ որ քեզի պէս
գող մը տռւնէս ներս իբրև վստահելի սպասուհի պա-
հած եմ:

ԱՆՈՒԾ.— Ինչո՞ւ չէք ուզեր լսել տիկին, ես
լուր չունիմ:

ԻՍԿՈՒՀԻԿԻ.— Կը համարձակի՞ս տակաւին բե-
րանդ բանալու: Դուն լուր չունիմ, հապա ե՞ս լուր
ունիմ: Անշուշտ թէ լուր չես ունենար: Գող մը իր
ըրածը ե՞րբ խօսուզվանած է որ: Շուտ հիմա կը պա-
հանջեմ: Հեռացիր այքիս առջեւէն ու բեր դիր տեղը
գողցոծ առարկադ: (Անուս կը մեկնի լալով): (Իս-
կուհի զայրացած կ'երքեւեկի սենեակին մեջ՝ վերջին ծայր
զղայնացած, մենախօսելով). Տէր Աստուած, այս ի՞նչ
փորձանք էր փաթթեցիր զլխուս: Մեղքցանք, բաինք
ծնողքը մհուու: Գոնէ տղջիկը փրկենք: Քովերնիս ա-
ռինք ու մեծցուցինք՝ հաւատալով որ իր ծնողացը
պէս ազնիւ ու առաքինի մէկը կրնայ ըլլաւ: Ողոր-
մած հոգի մայրը՝ այնքան ազնիւ ու վստահելի կին
մըն էր, որ իր տառապանքի օրերուն իսկ՝ ձայնը
ինձմէ զատ մարդ չէր իմանար: Օր մը խեղճը փողո-
ցեն անցած պահուն անուանս սկզբնատառերը կըող
թաշկինակ մը գտած էր իսկոյն բերաւ և ինծի տուաւ
կարձալով որ իմս է: Ես ի՞նչ գիտնամ, կ'ըսեն թէ
եղերքը նայէ՝ կերպասը առ, մօրը նայէ՝ աղջիկը:
Մօրը նայեցանք և առինք: Անա այդ մօր կտորը:
Փոխանակ երախտապարտ ըլլալու, գողութիւն ալ
կ'ընէ: Ի՞նչ օրերու մնացինք, Տէր Աստուած: Մայրս
իմ աղայական չարութիւններուս զայրացած, կը յան-

գիմանէր զիս՝ երանելով իր օրերը։ Ողջ ըլլար ու
տեսնէր սա իմ քաշածներս անհաւատարիմ ծառայի մը
ձեռքէն։ (Դուռը կը զարնուի)

իՍԿՈՒՀԻՑԻ. — Ո՞վ է։

ԱՂԱԽՆԻ. — (Ներս մտնելով) Մայրիկ, Տիկին ես-
թերը եկաւ և սպասման սրահը տռաջնորդեցի զինք-
կ'ուզէ հետդ տեսակցիլ, եթէ ժամանակ ունիս։ Հա-
զորդե՞մ իրեն քու հոս ըլլալու։

իՍԿՈՒՀԻ. — Մինակն է չէ՞։

ԱՂԱԽՆԻ. — Այո։

իՍԿՈՒՀԻՑԻ. — Ներս առաջնորդէ և յետոյ աղուոր
սուրճ մը պատրաստէ մեզի։

ԱՂԱԽՆԻ. — Շատ լաւ,

իՍԿՈՒՀԻՑԻ. — Խեղճ ընկերուհիս։ Արդեօք որքան
պիտի նեղուի եթէ իմանայ պատահածը, որովհետեւ
այդ աղջկան քովս մտնելուն պատճառ եղողը ինք է
եղած։ Բայց ի՞նչ յանցանք ունի խեղճը։ (Դուռը կը
զարնուի)

ԵՍԹԵՐ. — Բարե Տիկին իսկուհի։

իՍԿՈՒՀԻՑԻ. — (Դիմաւորելով) Հրամմեցէք Տիկին
եսթեր։ Բարի եկար, Շիտակը ժամ մըն է քեզի կը
սպասէի, (կը նսին)

ԵՍԹԵՐ. — Ի՞նչպէս ես Տիկ, իսկուհի։ Քանի օր է
կը փափաքէի այցելութիւն մը տալ, բայց զանազան
պատճառներ արգելք հանդիսացան։

իՍԿՈՒՀԻՑԻ. — Գործին պոչը եթէ չթողուս, ան-
կարելի է որ ժամանակ ունենաս գուրս ելլելու։ Քիչ
մը քովի գրացիէդ գաս առ։

ԵՍԹԵՐ. — Կ'երեւի տակաւին իմ ամուսնոյս ի՞նչ
ըլլալը չես հասկցած։ Բայց թողունք ասոնք, Զես հար-

ցըներ թէ ինչու եկաց, Ոչ չիւրա սիրութեան ժամին է
և ոչ ու օրը:

ԻՍԿՈՒՀԻՀԻ, — Քեզի համար դուռաս միշտ բաց է:
Յաւենայն գէպս քանի որ կը փափաքիս որ հարցնեմ
գուլուդ պատճ ուր, մաիկ կ'ընեմ:

ԵՍԹԵԲԸ, — Քիչ մը ջղայեացած կը տեսնեմ քեզ
այսօր, ինչո՞ւ է արդեօք:

ԻՍԿՈՒՀԻՀԻ, — Զիս ե՞րբ հանդարատ տեսած ես որ,
իսկուգէս կը զարմանամ ըրած հարցումիդ:

ԵՍԹԵԲԸ, — Գիտեմ ատիկո, բայց այսօր աւելի
շեշտուած է այդ երեւոյթը մէջդ, որովհետեւ ձայնդ
մինչև խոհանոց կու գորուկ'երեւի խորհեցայ դժբախ-
առւթիւն մը պատահած է:

ԻՍԿՈՒՀԻՀԻ, — Դժբախտութիւն չէ, բայց պզտիկ
գոզութիւն մը պատահած է տունին մէջ:

ԵՍԹԵԲԸ, Ի՞նչ կը լսեմ:

ԻՍԿՈՒՀԻՀԻ, — Այսու իրաւո՛ւնք ունիմ եղեր զայ-
րացկո՞ւ բլլուս, չէ՞:

ԵՍԹԵԲԸ, — Միշտ հանդարտութեամբ գործելը
լու արդիւնքներ կու տայ, Զայրանալու պէտք չկայ
բնոււ կրնամ հասկնութ թէ ի՞նչ է գողցուածը և ե՞րբ:

ԻՍԿՈՒՀԻՀԻ, — Նամակ մը գրած էի երեկ շուկայ
իջնելէս տառջ, և գրիչս լոււ կը յիշեմ սեղանիս վը-
րան էր, Այս տառու կրկին պէտքը ունեցայ անոր:
Փնտաեցի շատ բայց չդառյ:

ԵՍԹԵԲԸ, — Զորմանալի բան: Զբլուս որ գզըու-
ցին մէջ կամ գրպանդ գրած բլլուս:

ԻՍԿՈՒՀԻՀԻ, — Ցիշութիւնս վրասէ, չիմ ցնդած
առկաւին:

ԵՍԹԵԲԸ, — Այդ ըսել չուզեցի, կրնայ մոռացու-

թիւն մը պատահած ըլլալ։ Մահկանացուներ ենք չէ՞
ի վերջոյ։

իՍկոիչի. — Զեմ կարծեր, որովհետեւ հիմակ-
ւան պէս կը յիշեմ։

եՍթեր. — Ո՞վ կը կարծես որ վերցուցած ըլլայ։
իՍկոիչի. — Ի՞նչ վերցուցած։ Վերցնողը գործը

լրանալէն վերջ կը բերէր տեղը կը դնէր։ Դողցած ըսէ՛,

եՍթեր. — Զե՞ս կարծեր որ Աղաւնին սխալմամբ
պայուսակին մէջ գրած ըլլայ՝ իրը կարծելով։

իՍկոիչի. — Ո՞չ։ Որովհետեւ ազջիկս քանի մը
անգամ այդպիսի արարքներու մէջ տեսնելուն՝ պատ-
ժած եմ զինք ու խրատած որ իրը չեղող ուեւէ առար-
կայի ձեռք չգպցնէ։ ու այդ է պատճառը որ ինձի մը-
տածել կու տայ թէ սպասունին գողցած ըլլալու է։

եՍթեր. — Վատահ գիտե՞ս։

իՍկոիչի. — Անունիս պէս։

եՍթեր. — Հարցուցի՞ր իրեն։ և ի՞նչ ըստւ։

իՍկոիչի. — Ի՞նչ պիտի ըսէ։ ուրացաւ։ Սաի-
պեցի որ իսկոյն բերէ և սեղանին վրայ դնէ այն-
պէս ինչպէս որ վերցուցած էր։ Կը տեսնեմ որ գուն-
ալ ինձի պէս մտահոգուելու սկսարք Թողունք տառնք։
Ես սպասնացի իրեն գուրս վտարել, անանկ որ ուր
որ է քիչ յետոյ կու գայ գրիչը։ Խօսէ նայինք՝ ի՞նչ
նորութիւն ունիս։

եՍթեր. — Ոզջութիւն։ Կիսերու մէջ տարա-
ծ այնութիւն կար որ նոր կարպասներ և բրդեղէններ
եկած են։ Միտք ունէի անգամ մը շուկայ իջնելու։

իՍկոիչի. — Այո՛։ Ես ալ իմ ոցած էի։ երէկ
շուկայ իջայ, քանի մը կտորներ գնեցի, կ'ուզէ՛իր տես-
նել։ (Ալաւնի սուրենը կը բաժնէ)։

ԵՍԹԵՐ. — Աիրով եթէ քեզի ձանձրոյթ չըլլոր :
ԻՍԿՈՒՀԻՀԻ . — Աղաւնի աղջիկս , պահարանիս մէջ
քանի մը ծրաբներ կան , ինձի բեր զանոնք :

ԱՂԱԽՆԻ . — Շատ լաւ :

ԵՍԹԵՐ . — Լաւ բաներ կա՞ն :

ԻՍԿՈՒՀԻՀԻ . — Այո՛ , Եթէ լաւ գրամ ունենաս :

ԵՍԹԵՐ . — Գիտե՞ս երկկ երեսուն սուկիի չափ
դրամ ոռի մերինէն՝ երբ տեսայ որ տրամադրութիւ-
նը տեղն է :

ԻՍԿՈՒՀԻՀԻ . — Լաւ ես ըրեր : Բաւական աչքը
բաց ես գիտե՞ս : (Ալաւեի ներս կը մտնե ծրաներով) :

ԱՂԱԽՆԻ . — Մայրիկ ասո՞նք են ուզածներդ :

ԻՍԿՈՒՀԻ . — Այո՛ , աղջիկս . հոս բեր:

ԱՂԱԽՆԻ . — Ուրիշ հրաման մը ունի՞ս մայրիկ :

ԻՍԿՈՒՀԻ . — Գուտենեները հաւաքէ և տար :

ԱՂԱԽՆԻ . — Լաւ : (Եթ հաւաքէ եւ դուրս) :

ԻՍԿՈՒՀԻ . — Ահա սո՞վովիսկան գուրօնն կերպաս
մը որուն եարաւան արժեց 8 սուկի :

ԵՍԹԵՐ . — Գոյնը քիչ մը անախորժ չէ՝ կ'ըսես :

ԻՍԿՈՒՀԻ . — Ես ալ թէկ շատ չսիրեցի , բայց
որովհետեւ վերջին կտորը մնացած էր . ստիպուած եղայ
գնելու . որովհետեւ երկու ձեռք հագուստէ զատ ու-
րիշը չունիմ : Ահա գաղակցուի թել ալ . որուն հատը
քառասուն դահեկանի առի :

ԵՍԹԵՐ . — Խ սթուած ես կարծեմ :

ԻՍԿՈՒՀԻ . — Ես ալ այգակս կը կարգէի . բայց
մարդը հաշուեցոյցը բացու և կարգաց աչքիս առջեւ :

ԵՍԹԵՐ . — Ա՛ , այդ վաճառականները : Զե՞ս գի-
տեր ինչ ստախօս և խարդախ մարդիկներ են ա-

նոնք։ Կտոր մը ապրանք ծախելու համար հազարեր-
դում կ'ընեն իրենց աչքին ու կրօնքին վրան, ինչ որ
է, լաւ ես ըրած առնելուդ, առջեւնիս ձմեռ է ար-
դէն։

ԻՍԿՈՒՀԻՀԻ. — Ահա աղջկանս համար գիշերանոցի
կտոր մը։ Սիրուն է, չէ՞։

ԵՍԹԵՐ. — Գէշ չէ։ Ես ալ կ'ուզէի գնել ասոնց-
մէ։ Ուրկէ՞ առիր կերպառները։

ԻՍԿՈՒՀԻՀԻ. — Աս ծերունի Գեղամ աղայէն։ Գէշ
մարդ չէ գիտե՞ս։ Ճիշդ է որ այս պատերազմը բոլոր
վաճառականներուն մէջ խղճմտանք ըսուածը մեռ-
ցուց, բայց ասիկա բաղդատմամբ ուրիշներու աւելի
խղճմտութեամբ կը վարուի իր յաճախօրդներուն հետ
երբ մանաւանդ անոնք հինքն ծանօթ են իրեն և իրմէ
կ'ընեն տոեւտուրը։

ԵՍԹԵՐ. — Ժամանակ ունի՞ս ընկերանալու ին-
ձի։ Ես չեմ ճանչնար զինք, թերեւս քու խաթերդ
համար աւելի աժան ալ կարենանք գնել։

ԻՍԿՈՒՀԻՀԻ. — Սիրով։ Դուն գնա պատրաստուէ,
ես ալ անմիջապէս կու գամ։

ԵՍԹԵՐ. — Լաւ ուրեմն ցտեսութիւն։

ԻՍԿՈՒՀԻՀԻ. — Բարի եկար։

(Վ. Ա. Ռ Ա. Գ Ո Յ Բ Ը)

Բ. ՏԵՍԱՐԱՆ

(Նոյն սրահին մեջ, գրասեղաբեին առջեւ Աղաւնի եւ իր ընկերունին նւնիկէ նսած դաս կը սուրվին։ Մեղանին վրայ գրիչ, մելան, տեսրակներ ու գիրեւեր։)

ԱՂԱՒՆԻ. (Դժգոնելով) — Եւնիկէ գիտե՞ս, վաղը բաւական գժուար դասեր ունինք։ Զեմ գիտեր ի՞նչ հաճոյք կը զգան այս ուսուցիչներն ալ՝ շատ դաս տալէ։ Իրենք չեն եա սորվողները։ Իրենց ի՞նչ հոգը որ աշակերտները պիտի յոգնին ու գիշերները անքուն պիտի մնան։ Երանի մանկապարտէզի աշակերտներուն։ Որքան մեծաննք՝ կարծես կետնքը անտանելի գառնալ կը սկսի փոխանակ բաղձալի դառնալու։ Դպրոց չերթալ մօրս ալ փափաքն է։ որովհետև ձանձրացած է սպասուհին և միտք ունի հանելու այլեւս։ Անցեալ օր երբ քիչ մը ուշ պառկեցայ, յաջորդ օր եթէ հայրս չարգիլէր՝ տեսչութեան քով բողոքի պիտի երթար։

ԵԽՆԻԿԻ. — Աղաւնի, ինչո՞ւ միշտ դժգոնութիւն կը յայտնես և ուսուցիչներն ալ յանցաւոր կը հանես։ Խորհէ որ ինչպէս մեր ծնողքը, նոյնպէս անոնք կը գուրգուրան մեր վրայ և միշտ մեր բարիքը կը խորհին։ Առ մի՛ նայիր որ երբեմն անհոգ մայրեր, աւելի շիտակը՝ դպրոցական օրէնքները չգիտցողներ՝ կը քննադատեն դպրոցն ու ուսուցիչները։ ոչինչ բաներու համար բողոքի կ'երթան և շատ անգամ ա-

շակերտութեան տաջե կը խայտառակեն զանոնք : Եթէ
մարդ քիչ մը շրջանայեաց ըլլայ և մանաւանդ հեռատես,
բնաւ այս բաներուն տեղի չի տար :

ԱՆՈՒԾ . — Աստուածդ սիրես . բարոյախօսու-
թիւնը մէկդի ձգէ : Զանձրացած եմ արդեն մօրս ձեռ-
քէն և եթէ չամչնամ՝ պիտի կռուիմ ալ հետը :

ԵԽՆԻԿԻ — Քաւ լիցի . որ բարոյախօս մը ըլ-
լամ : Բարոյախօս մը ըլլալու համար եթէ ոչ Ասկ-
րատ մը գէթ ութսուն տարիներու փորձառութիւն մը
շալկած ըլլու ուսերուս : Բարուախօս մը չեմ .
բայց կը սիրեմ բարի բաներ մտիկ բնել՝ երբ մանա-
ւանդ անոնք բան կը սորվեցնեն ինձի : Ուրեմն ա-
ռանց տրտնջելու սկսինք մեր գործին , ի՞ո՞չ ունինք
առաջին պահուն :

ԱՂԱԽՆԻ — Կ արծեմ Անգրիւրէն պիտի ըլլայ չէ ,
ԵԽՆԻԿԻ . — Որքան կը լիշեմ . զազը երկուշար-
թի է և առաջին պահուն շարազրութիւն անինք .
այն ալ ազատ նիւթ :

ԱՂԱԽՆԻ — Ճիշդ է :

ԵԽՆԻԿԻ . — Քրա՞մ ես գէթ սեւայրութիւնը .

ԱՂԱԽՆԻ . — Ոչ առկաւին . զո՞ւն :

ԵԽՆԻԿԻ . — Այո . առաջին սեւազրութիւնը ըրած
եմ :

ԱՂԱԽՆԻ . — Կրնա՞ս հասկնալ նիւթը :

ԵԽՆԻԿԻ . — Բեզի շատ ծանօթ զէպք մըն է ,
կարգամ . նայիմ պիտի կարենա՞ս հսսկնալ :

ԱՂԱԽՆԻ . — Մտիկ կ'ընեմ :

ԵԽՆԻԿԻ . — Գուա եօթը տարեկան էր ան երբ
կորսցաւց իր ծնողքը զընթէ միենոյն օրերու մէջ :
Կառապան էր չոյրը և հազիւ օրապահիկը ճարոզ Գրե-

թէ կէս մը փլած տունի մէջ ծուարած էին անոնք։
Զմեռը ամբողջ անձրեւը տանիքէն ներս կը մաղուէր։
Խեղճուկրակ խորի կտոր մը հաղար կարկտաններով
կենդանացած հողին մերկութիւնը կը ծածկէր։

Դեկտեմբերեան ցուրտ օր մըն էր, երեկոյեան
գէմ, խեղճ հայրը ձիերը լծած կտոքին՝ կը շտապէր
գէպի կոյարան քանի մը գաւական շահելու համար։
Կը սուրուր կայծակի՝ արագութեամբ մաքառելով
ցուրտին ու բուքին գէմ երբ յանկարծ ձիերը խըրտ-
չելով գիւղի ծառուղիէն բուսնող ինքնաշարժէ մը,
գլորեցաւ ձորն ի վար։ Ձիչ մը միայն սղոցեց օդը։
Զիերու հետ անշնչացած էր նաև ինքը, կառապանը։
Զարս հոգի կար միայն յուզարկաւոր . . . Մահուան
մէջ իսկ մարդ պէտք է հարուստ ըլլայ, որպէսզի
յարգեն զայն . . ապ ոցոյց՝ խեղճ կառապանը։ Երիտա-
սարդ հաստին մէջ հողին յանձնելէ վերջ իր ամու-
սինը՝ անկէ վերջ խենդ էր կտրած կինը։ Զէր գիտեր
ընելիքը, կ'աշխատէր մեքենաբար առանց գիտակցե-
լու։ Երիտասարդ էր ու անփորձ, անոք ու անտէ-
րունջ, երեխան հիւսնդ էր ու գեղ գնելու ան-
կարող, ի՞նչ ընէր։ Պատուաւոր ընտանիքի զաւակ
էր։ Մուրալ՝ չէր կրնար, Թաղականութեան գիմելու
կ'ամշնար։ Կու լար շարունակ անմխիթար ու յուսա-
հատ։ Բայց լացը չէր կրնար գարմանել երեխան։
Մօրմէն սորված գեղեր կ'ուզէր փորձել։ Միտքը ին-
կաւ որ տաք քարեր կը գնէր իրեն մայրը՝ երբ հի-
ւանդանար։ Փութկոտութեամբ գիւղ գէպի կրակա-
րան։ Լեցուց ածուխը ու վրան՝ քարիւզ։ Լուցկիի
հարուած մը՝ ու բանկած էր ածուխը։ Բայց ի՞նչ ցա-
ւալի տեսարան։ Դենջակը, որ ածուխին մօտ ըլ-

լալուն իւզոտած էր անոր հետ միտախն կրտկ կ'առնէր . . . :

ԱՂԱՀՆԻ. — Հասկցայ . . . մեր Անուշի ծնողքին պատմութիւնն է , Ա՛լ կը բաւէ , մի՛ շարունակեր : Մազերս փշաքաղիլ սկսան ու բաներ մը կը զգամ , Ո՞րքան կը սիրես այս տեսակ բաներու վրայ գրել : Զկրցա՞ր ուրիշ նիւթ մը գտնել :

ԵԽՆԻԿԵ. — Խառնուածքի խնդիր է : Ե՞րբ մեր ազգը խնդացած է , որ կարենանք ուրախ գրուագներու վրայ գրել : Որ կողմ գառնաս՝ սուգ ու տրրամութիւն է , բայց միթէ Քրիստոսի յարութիւնն ալ սուգին ու տրտմութենէն չձնու : Լաւ քանի որ չես ուզեր մտիկ ընել , փոխենք նիւթը , ի՞նչ ունինք յաջորդ պահուն :

ԱՂԱՀՆԻ. — Հա՛ . . . լաւ յիշեցի :

ԵԽՆԻԿԵ. — Ի՞նչ բան :

ԱՂԱՀՆԻ. — Կը յիշե՞ս , վո՞րը անկախութեան օրն է և գպրոց չունինք : Կարծեմ ջուրին ակը պիտի երթանք աշակերտներով :

ԵԽՆԻԿԵ. — Ի՞նչպէս ալ կը յիշես : Գործիդ կուգան այդ բաները : Բայց ատիկու արգելք մը չէ որ դասերնիս սորզինք :

ԱՂԱՀՆԻ. — Այս . . . արգելք մը չէ . . . բայց կրնանք ուրիշ օրուայ յետուձգել : Գիտե՞ս այս իրիկուն մեծ մրցում կայ կառավարական գաշտին վրայ , ընկերուհիներ պիտի երթան կարծեմ . . . կ'ուզե՞ս ընկերանալ անոնց :

ԵԽՆԻԿԵ. — Շատ կը ցաւիմ . . .

ԵԽՆԻԿԵ. — Ի՞նչո՞ւ :

ԵԽՆԻԿԵ. — Որովհետեւ մայրս չի ձգեր որ առան
իրեն տեղ երթամ:

ԱՂԱՀՆԻ. — Սուտ մը կը խօսինք:

ԵԽՆԻԿԵ. — Խարեմ մայրս:

ԱՂԱՀՆԻ. — Ի՞նչ կ'ըլլայ: Տանը մէջ բանտարա-
կըւելէն ի՞նչ կ'ելլէ: Եթէ կը կարծես որ չի թողուր,
ես կ'ըսեմ որ ուրիշ ընկերուհիի մը տունը դաս սոր-
վելու պիտի երթանք:

ԵԽՆԻԿԵ. — Կը ցաւիմ և կը զարմանամ վրադ:
Ինչպէս պիտի համարձակիս սուտ խօսելու: Մոռցա՞ր
կրօնքի դաստութին պատմած ևստախօսին պատմու-
թիւնը»: Հապտ եթէ երեւան ելլէ ստախօսութիւնդ:
Դիտեմ, վրաս պիտի խնդաս, բայց հոգ չէ, ամէն
մարդ ազատ է: Կրնաս դուն երթալ, չեմ ուզեր ար-
գելք ըլլալ քեզի: Թոյլ տուր որ մեկնիմ:

ԱՂԱՀՆԻ. — Լուս Քանի որ այդքան կը վախ-
նաս մօրմէդ, չեմ ստիպեր: Կ'ուզեց՞ս որ ընկերանամ
քեզի մինչև տուն:

ԵԽՆԻԿԵ. — Զէ, չնորհակտէ եմ: Եթէ Դաշտ պի-
տի երթաս, քիչ ժամանակ ունիս ու հոգիւ կը հաս-
նիս: Կրնամ մինակս ալ երթալ:

ԱՂԱՀՆԻ. — Զ՞ս կարծեր որ մայրդ բարկանայ
քեզ մինակ տեսնելով՝ քանի որ այդքան բծախըն-
դիր է:

ԵԽՆԻԿԵ. — Այսի՞նքն: Կը հասկնամ միտքդ:

ԱՂԱՀՆԻ. — Ի՞նչ է, նեղուեցար:

ԵԽՆԻԿԵ. — Եթէ գուշակեցիր ինչո՞ւ կը հարցը-
նես:

ԱՂԱՀՆԻ. — Զեմ ուզեր սիրուգ կոսրել, եթէ



վիրաւորեցի քեզ, ներողութիւն կը խնդրեմ: Թոյլ
տուր որ ընկերանամ քեզի մինչև տուն:

Եհնիկի: — Ինչպէս որ կ'ուզես:

Աղաինի. — Հոգ չէ. օդ մըն ու լ առած կ'ըլլամ,
ու անկէ անդին եթէ մէկը գանեմ՝ կ'երթամ // Դաշտ
ապա թէ ոչ ետ կը գառնամ:

(Վ. Ա. Բ. Գ. Ռ Յ Բ Բ)

Գ. ՏԵՍԱՐԱՆ

(Անուշ աւելը ձեռքին՝ անկիւն մը կը մրափիկ.
պահ մը վերջ մօրը տեսիլքը կ'երեւի բոլորովին սպի-
տակ հագուած մինչեւ ծայրը ոսերուն: Ուսերուն հետե-
սակի երկու թեւեր: Ազ ձեռքը կէս մը վեր բարձրացու-
ցած կը դիտէ բնացող աղջիկը: Լուսաւոր բեմը յան-
կարծ խորհրդաւորութիւն մը կը զգենու: Գործողութեան
ընթացքին նեռուեն. կը լսուի մելամաղձոս եղանակ մը.

ՀՐԵՇՏԱԿ. — Քնացիր ազնիւ հոգի, ով առաքի-
նութեան մարմնացում: Մի՛ կարծեր որ մայրդ թէ և
քեզմէ հեռու՞ բայց քեզմով չի հետաքրքրուիր:
Քովդ է ան միշտ ու կը հսկէ քու վրադ որպէս պա-
հապան հրեշտակ: Համբերէ տառապանքին ու մի-
դգոնիր անկէ բնաւ: Ու ազիզ բալաս, քիչ վերջ ա-
ւելի դառն իրականութիւններու առջև պիտի գանես
ինքզինքդ: Անվախօրէն դիմադրութիւն ցոյց տուր և
մի՛ սարսափիր, որովհետեւ քուկդ է յաղթանակը: Ա-

ուաքինութիւնը միշտ իրրե ատատիպար թող փառվե
երեսիդ գրայ: Ճշմարտախօսութիւնը զէնքդ ու ար-
դարութիւնը զրահդ թող ըլլան: Այդերկութով պիտի
յազթեա չարունակ՝ ոտքիդ տակ տրորելով բոլոր
թշնամիներգ: Գուն մանիշակն ես վայրի: զորս ան-
գութ ձհռքեր թէւ կը պոկեն: բայց յետոյ զզջալով՝
իրենց կուրծքի լամբատկին կ'անցընեն: Սիրէ՛ անիստիր
բոլոր անդամները այն ընտանիքին, որուն հովանիին
տակ կը գտնուիս, և անոնց կը պարտիս կեանքդ կեան-
քիդ մատաղ: քո մայրիկ, քունդ անուշ, գուն ա-
նուշ, քնացիր գուստը իմ Անուշ: (Տեսիլքը կը հեռա-
նայ կամաց կամաց ու բեմը կը լուսաւորուի: Լոյսին
հետ մեկսեղ կը լսուի տիրունիին ձայնը):

ԻՍԿՈՒՀԻՀԻ. — (Ներս մտնելով) Անո՞ւշ, Անո՞ւշ,

ԱՆՈՒԻՇ. — (Ընդոս արքնեալով) Հրամմէ՛ տի-

րունի:

ԻՍԿՈՒՀԻՀԻ. — Անպիտան աղջիկ, հոս եկուր նա-
իմ: Այս ի՞նչ է քու ըրածդ: Հեմ հասկնար: Երէկ գը-
րիչս, այսօր պայուսակս, վաղն ալ տո՞ւնս պիտի գոզ-
նաս: Ո՞ւր գրիր պայուսակս: Ո՞ւր է գրիչս: Զեռքէս
չես ազատիր: Շիտակը խօսէ:

ԱՆՈՒԻՇ. — Տիկին, ես:

ԻՍԿՈՒՀԻՀԻ. — Շուտո, ապերախտ քեզի: Գող, ա-
նամօթ: Ուր որ տարիր, մէջաեղ հանեւ գրիչս ու պա-
յուսակս: ապա թէ ոչ բզիկ բզիկ կ'ընեմ: քեզի: (Վրան
կը յարձակի ականջներեն բոնած):

ԱՆՈՒԻՇ. — (Գողալով) Աստուած վկայ, տի-
գին, ես...

ԻՍԿՈՒՀԻՀԻ. — Լո՛է, Աստուածն ալ մէջը մի խառ-

ներ պարապ տեղ։ Անպիտան, նեղը մնալուդ պէս
Աստուածը մէջտեղ կը հանես՝ ինքզինքդ արդարացը-
նելու համար։ Եթէ Աստուածոյ վախը մէջդ ըլլար
չէիր գողնար գոյքերը մէկու մը որ քեզի շատ մը
փորձանքներէ ազատած է։

ԱՆՈՒԾ. Տիկին ես չառի։

ԻՍԿՈՒՀԻ. — Այո՛, դուն չառիր, հապս ո՞վ ա-
ռաւ։

ԱՆՈՒԾ. — Տիկին աչքերս կուրնան։

ԻՍԿՈՒՀԻ. — Զեռքէս չես ազատիր։ Ուրոր տա-
րիր, որու որ ծախեցիր, ըսէ՛։ Եթէ ճշմարտութիւնը
խօսիս, այս անգամ ալ կը խոստանամ ներել քեզ,
Ապա թէ ոչ գիտես թէ ի՞նչ կրնայ պատահիլ քեզի։

ԱՆՈՒԾ. — Տիկին թող ձեռքերս կտրին, եթէ ես
առի։

ԻՍԿՈՒՀԻ. — Չես ըսեր հա՞, և տակաւին կը յա-
մառիս, Յանցաւորը ես եմ դարձեալ, որ խղճալով
պահեցի քեզի։ Դուն տակաւին շարունակէ այդ կեան-
քը, հիմա ցոյց կու տամ քեզի (աղջիկը կանչելով) —
Աղաւանի։

ԱՂԱՒՆԻ. — (Ներս՝ այլայլած) Հրամմէ՛ մայրիկ,
զի՞ս ուզեցիր։

ԻՍԿՈՒՀԻ. — Այո՛։ Շուտ գնա և գիմացի ոստի-
կանատունէն ոստիկան մը կանչէ։

ԱՂԱՒՆԻ. — Ի՞նչ կայ մայրիկ, ինչո՞ւ ոստիկան-
կ'ուզես։ Ի՞նչ պատահեցաւ նորէն։

ԻՍԿՈՒՀԻ. — Ինչ որ ըսի, կատարէ իսկոյն։

ԱՂԱՒՆԻ. — Ինչո՞ւ կը պահես ինձմէ, մայր։ Հ-
ոէ ինծի, թերեւս կարենամ լուսարանել քեզ։

իԱԿՈՒՀԻ. — Քու գիտնալիք բանդ չէ ատեկաւ
ինչ որ ըսի, գործադրէ իսկոյն :

ԱՆՈՒԾ. — (Աղաչելով) Ախ տիկին, Աստուած
զկայ ևս լուր չունիմ, ձշմարիտ կ'ըսեմ թէ չտեսայ
ձեր կորսուած գոյքերը :

ԻԱԿՈՒՀԻ. — Մտիկ չեմ ըներ:

ԱՆՈՒԾ. — (Ոտերուն իյնալով) Կ'ազայնմ տիկին,
գթացէք իմ վրաս: Մինչև այսօր գողութիւն ընելու
տեսած էք որ այսքան կը տանջէք զիս: Թերեւս ու-
րիշի մը տուած էք և կոմ այնպիսի տեղ մը դրած՝ որ
չէք յիւեր:

ԻԱԿՈՒՀԻ. — Խրատ առլու սկսոր հիմաւ: Հեռա-
սիր քովէս ու պարապ տեղ մի՛ տքնիր սիրաւ շա-
հելու:

ԱՆՈՒԾ. — Ախ Աստուած իմ, այս ինչ պատու-
հոս էր պայթեցաւ գլխուս: Տակուին ի՞նչ փորձանք-
ներ պահած ես ինծի: Արդէն խորշականար եղած եմ
ու այսօր կը խամրիս այդ սառապեալ հոգիս (կու-
լայ):

ԻԱԿՈՒՀԻ. — Խենթենալը ոչինչ բան է ինձ հա-
մար: Բայց կ'արժէ թիզ մը աղջկան երեսէն այսքան
շարչարել ինքզինքս: Եթէ հիւանդութիւն մը գա-
վրաս՝ ո՞վ պիտի նայի ինծի ո՞վ պիտի խնամէ: Կ'ար-
ժէ որբ մը փրկելու համար ինքզինք կրակի նետել:
Զէ՛, պէտք է անպատճառ հեռացնեմ զինք տունէն ու
հաւատարիմ ծառաներուն դաս մը ըլլայ:

ԱՍՏԻԿԱՆ . — (Ներս մտնելով) Հրամմեցէք տիկին :

ԽՍԴՈՒՀԻՆ . — Պարոն ոստիկան, իմ այս ազախինս երկու անգամ գողութեան մէջ բռնեցի : Անուշութեամբ և խստութեամբ ուզեցի ի կարգ հրաւիրել դինք, բայց չկրցար ինգրեմ, տարէք գայն ձեր հետը և պետութեան օրէնքներուն համաձայն՝ պատժեցէք :

ԱՍՏԻԿԱՆ . — Քալէ նայիմ, տպերախտ ազգիկ, այս հասակիդ մէջ գողութիւն ընելու չե՞ս ամշնորս Քալէ ու այդ արցունքները քեզի պահէ :

ԱՆՈՒԾ . — (Պաղատազին) Պարոն ոստիկան հաւատացէք որ լուր չունիմ : Ճշմարիտ կ'ըսեմ, և չեմ ստեր ու կը վատահեցնեմ ձեզ որ եթէ տեսնեմ իսկ չեմ ճանչնար կորսուած ապրանքները, ո՞ւր մնաց որ գողնամ զանոնք :

ԽՍԴՈՒՀԻՆ . — Ինչ ազուոր ալ լեզու կը թափես :

ԱՆՈՒԾ . — Ախ պարոն ոստիկան, Աստուծոյ սիրոյն գոնէ գուք գթացէք :

ԱՍՏԻԿԱՆ . — Շուտ, եթէ կամքովդ չերթաս պիտի ստիպուիմ բռնի առնիդ քեզ :

ԱՆՈՒԾ . — Պր, ոստիկան, կը հնագանդիմ ակըրութեան կամքին և սակայն գիտցէք բոլորդ ու որ յանցանք չունիմ : Միայն թոյլ տուէք որ վերջին աշղօթք մը ընեմ այն յարկէն ներս, ուր միայն ու միայն արդարութիւն և ճշմարտութիւն սորված եմ և այսօր անոր զոհը կ'ըլլամ :

ԱՍՏԻԿԱՆ . — Լաւ :

ԱՆՈՒԾ. — (Յունկիր՝ ձեռնամած կ'երգի).

Ահա կուգամ սիրելի մայր,
 Միանալ քեզ պաշտելի հայր.
 Դիտցէք իրաւ որ անմեղ եմ,
 Գողութիւնն այս ես ըրած չեմ:

 Շուշան մըն եմ ես սրբանուէր,
 Բայց քանի որ վատ մարդիկներ
 Կը պոկեն զիս արմատախիլ,
 Ալ չեմ կրնար ես ալ ապրիլ:

ՈՍՏԻԿԱՆ. — Ելիր նայիմ ոտքի: (Դուրս):

ԻՍԿՈՒՀԻ. — Անպիտան աղջիկ: Զեմ գիտեր ին-
 ո՞ւ յուզուեցայ իր այս վերջին աղօթքէն: Կարծեա
 անձանօթ ձեռք մը սրտիս մէջ միած իր ճիրանները,
 Կը րզկտէր հոգիս: Արգեօք այս վիճակը պիտի չա-
 րունակուի այսպէս: Խզճմտանքս տանջելու սկսու-
 զիս: Բայց ինչո՞ւ: Յանցաւորի մը մեղքը մէջտեղ
 հանել չեմ կործեր որ սխու բան մը եղած ըլլայ: Զէ,
 ծառը պղտիկ եղած տանին պէտք է շտկել: Պէտք չէ
 ինքինքս խորեմ: Խիզճ ունենալն ալ գէշ բան է:
 Այսպիսիները մտնաւոնդ, որոնք ծնողական գուր-
 գուրանքի պակասը ունին, թող պատժուին՝ որ
 լաւ ապագայ ունենան: Թող գաս մը ըլլայ այս իրեն
 որպէսզի հասկնայ գողութեան ի՞նչ ըլլալը: Պատմած
 էի իրեն անգամ մը հաւկիթ զողցող տղուն պատմու-

թիւնը : Անշուշտ երեխայ ըլլալուն պիտի չհաւասար : Հիմա թող աչքովը տնանէ թէ ի՞նչ կ'ըլլայ հետեւանքը գոզութեան : (Դուռը կը զարնուի) Ո՞վ է :

ԳԵՂԱՄ . — (Ներս կը մտնի հեւալով) Տիկին իսկուհին դո՞ւք էք :

ԻՍԿՈՒՀԻՉԻ . — Այո՛, հրամմեցէք Գեղամ աղա, ի՞նչ կայ, բարի ըլլայ :

ԳԵՂԱՄ . — Այո, բարի է : Երէկ երեկոյ դուք էիք խանութէս ապրանքներ զնողը չէ՞ :

ԻՍԿՈՒՀԻՉԻ . — Այո, և դրամն ալ հին պարտքերուս հետ վճարեցի :

ԳԵՂԱՄ . — Այդ էր պատճառն արդէն որ զիս հանդարտ չթողուց և ստիպեց որ ձեր քովը դամ այսօր :

ԻՍԿՈՒՀԻՉԻ . — Բարի եկաք : Խօսեցէք աեսնենք :

ԳԵՂԱՄ . — Եթէ խօսիմ ճշմարտութիւնը պիտի ըսէք անշուշտ :

ԻՍԿՈՒՀԻՉԻ . — Զեմ հասկնար ձեր խօսքերուն իմաստը : Այսօր քիչ մը տարօրինակ ձեւով կը խօսիք :

ԳԵՂԱՄ . — Համբերութիւն տիկին : Երէկ վճարումը ընելէ վերջ խանութիս մէջ բան մը մռացա՞ք :

ԻՍԿՈՒՀԻՉԻ . — Ոչ, գնած կերպասներս հոս քովան :

ԳԵՂԱՄ . — Կերպասներէն զատ ուրիշ բան :

ԻՍԿՈՒՀԻՉԻ . — Ոչ, չեմ յիշեր : Ի՞նչ կընայ եղած ըլլալ արդեօք :

ԳԵՂԱՄ . — Կիսերուն համար շատ կարեւոր և սի -

բելի առարկայ մը : Առանկ պայուսակի պէս բան մը :
իՍԿՈՒՀԻՀԻ . — (Աչքերը բացած) ի՞նչ : Ուրեմն հո՞ն
եմ մոռցած պայուսակս : Մի կատակէք Գեղամ աղա :
ԳԵՂԱՄ . — Հանդարտեցէք և վերագրումներ մի
շնէք : Ի՞նչ գոյն ունէր ձեր պայուսակը :

իՍԿՈՒՀԻՀԻ . — Կարմիր :

ԳԵՂԱՄ . — (Երկարելով) Հրամմեցէք : Այս է չէ՞ :

իՍԿՈՒՀԻՀԻ . — Որքան երախտապարտ եմ Գեղամ
աղա : (Գերոցին ոսկի մը նույեր տալով) : Ասիկա իմ
կողմէս իրրե չնչին նուէր ընդունեցէք :

ԳԵՂԱՄ . — Շնորհակալ եմ :

իՍԿՈՒՀԻՀԻ . — (Կը բանայ պայուսակը ու խառնած
ատեն դուրս կը հանե նաեւ գրիչը) : Ախ , Աստուած իմ ,
Պիտի խենդենամ ես : Ահա գրիչս ալ , Հսել է պայուս-
ակիս մէ՞ջ եմ մոռցած և լուր լուր չունիմ : Աղաւ-
նի , պարոն ոստիկանը շուտ հոս կանչէ :

ԱՂԱԽՆԻ . — Իսկոյն :

իՍԿՈՒՀԻՀԻ . — Ես ի՞նչ ըրի , Տէր Աստուած : Լո՞յ
որ եկաք Գեղամ աղա , ապա թէ ոչ անմեղի մը ար-
եան պատճառ պիտի ըլլայի : Այս յիշողութեան պա-
կասէն , տակաւին շատ վնասներու պիտի հանդիպիմ
ես : Քանի քանի անգամներ փորձով տեսնուած է այդ
պակասութիւնը վրաս ու տակաւին կը յամառիմ :
Բայց ձեռքս չէ : Գիտեմ ջղային եմ ու կը խօսիմ ա-
ռանց տրամաբաննելու , առանց սնգամ մը յիշողու-
թիւնս սրելով ամփոփուելու և պատճառը փնտուելու :
Իրաւունք ունէր տիկին եսթեր , ու ես պէտք էր ան-
գամ մը պրպտէի՝ յանցանքը ուրիշին վրայ ձգելէ
առաջ : Բայց ի՞նչ օգուտ , գործը զործէն անցած է :

Երանի ոստիկանատուն չհասած՝ Աղաւնի հասնէր անոնց
ետեւէն։ Զըլլայ այս խենդուկն ու վախնալով՝ ետ
վերադառնայ։ Բայց ոչ, քրոջը պէս կը սիրէր զայն
ու անոր ազատութեան համար դիտեմ որ պիտի թա-
խանձէր ինծի։ Եթէ չվախնար, անանկ որ անպատճառ
կ'երթայ։

ԳԵՂԱՄ. — Համբերեցէք տիկին, Վեր ելած պա-
հուս գոնէն նոր գուրս ելած էր ոստիկանը։

ԻՍԿՈՒՀԻ. — Իրա՞ւ։ (Դեպի դուռ կ'ուղղուի
դուրս ևայելով)։ Բայց մարդ չերեւիր տակաւին։

ԳԵՂԱՄ. — Համբերութեան դասը տուոզը գուք
էիք տիկին քիչ առաջ։ Կարեւորը կորսուած առար-
կաներն էին։ Եթէ չզան իսկ՝ կրնաք երթալ և ոստի-
կանապետէն խնդրել ազջկան ազատ արձակուիլը՝
ցոյց առողջ գտնուած առարկաները։

ԻՍԿՈՒՀԻ. — Կրնամ այս՝ բայց տւելի լու չէ։
որ խեղճ ազջիկը բանտէն ներս շմառած ու անունը
չորձանագրուած ազատուի։

ԳԵՂԱՄ. — Ասիկա առաջ պէտք էր խորհէիք.
Բայց քանի որ կատարուած իրոզութեան մը առջե
կը գոնուիք, պէտք է այժ է համբերէք։

ԻՍԿՈՒՀԻ. — (Աւախսութեամբ) Ահա կուգան Աի-
բեմ, սիրեմ այդ անուշիկ հասակդ հոգիս։

ԱՍՏԻԿԱՆ. — Հրամմեցէք տիկին։

ԻՍԿՈՒՀԻ. — Պարօն ոստիկան, ներոզամիտ եղէք
ձեզի պատճառած ձանձրոյթիս։ Իսձի յանձնեցէք ազ-
ջիւ։ Մրգինառե գտայ կորուսած առարկաներս։

ԱՍՏԻԿԱՆ. — Ի՞նչպէս։

ԻՍԿՈՒՀԻՀԻ. — Այս ծերունի մարդուն խանութն եմ մոռցած՝ երէկ տպրանքներ գնած պահուս:

ՈՍՏԻԿԱՆ. — (Գեղամին) Ճիշտ են ըստները:

ԴԵՂԱՄ. — Այս, պարոն ոստիկան:

ՈՍՏԻԿԱՆ. — Հրամմեցէք ուրեմն:

ԻՍԿՈՒՀԻՀԻ. — Շնորհակալ եմ պարոն ոստիկան: (Փաբրուելով Անուշի վզին) Այս աղջիկս, արդեօք որ քան ցաւցուցի քեզ, որքան արցունքներ թափել տը-ւի զուր տեղ այդ անմեղ աչքերէդ, ու որքան տան-ջեցի այդ սպիտակ ու ձիւնափայլ հոգիդ: Աստուծոյ հրեշտակն էիր դուն, որուն սատանան եղայ ես ու այն սրբութիւնը որ օթեւանած էր մէջդ՝ աղարտեցի իմ չարութեամբու: Սիրեմ այդ անմեղ աչուկննրդ, ո-րոնք հոգիիդ թարգմանը կ'ըլլան այս պահուս: Ժողո-վուրդը չի սխալիր երբեք ու դուն ճշմարիտ զա-ւակն ես մօրդ, այդ աղնիւ մօրդ՝ որուն գովքը կ'ը-նէի միշտ քեզի: Ներէ ինծի սիրելիս: Կը խոստանամ ան հրապարակաւ Աղաւնիկս աւելի գուրգուրաւ վը-րագ ու գպրոցներ զրկել՝ որպէսզի աւելի ազնուա-նայ այդ վեհաճան հոգիդ: Յիւր ներողութիւն սիրե-լիս:

Տեսէք թէ ի՞նչ գէշ բան է շրջանայեաց չեւ-
լոււ:




[- 144]

A 15

٢٠٢٥٦

Printed in Egypt by
New Star Press
Cairo





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007747

ЦЕНА

11
1952г